

1 Այս մասին մանրամասն տե՛ս Ե. Գևորգյան, Զուցական շարժությունները հայոց շարժաստի՛ան մեջ (Բանբեր երևանի համալսարանի, 1993, № 11):

բեկն է պարզում ռես Հովանեսը,—մենք էլ պարտքի տակ մնացողը չենք» (ԲԹ):

«Ձեռքով ցույց տալ» [ձեռքը պարզել (մեկնել) մեկի կամ մի բանի կողմը]: «Երկշարք կազմած՝ բայելով վերադառնում էինք կայարանից, ...մեկը, ձեռքը մեկնելով մեղ, ասաց՝ կանգ առ: Ճանաչեցի Արտաշես Միր-դոյանին և մշեյի զրոավար Սմբատին» (Ղ. Հ.): «Մեր դպրոցի վարիչ Ընկերը պատշգամբից ձեռքը մեկնեց ժողովողին:—Ականջ արեք, հայրենակիցներ... Աղմուկը դադարեց, զուխները շրջվեցին դեպի նա» (ՍԽ): Ըստ որում, շարժույթը կարող է ուղղված լինել երևակայական կամ հեռու-հեռավոր հասցեատիրոջ, նաև այնքան եռանդուն, որքան հուզված է շարժասողը (ժեստը կատարողը): «Երիտասարդ Վահան Բագրատյանը, ձեռքը պարզելով թուրքական շտաբի կողմը, բացականչում է:—Հիմա թող ձեր հրետանին մեզ գտնի մեր անտառապատ լեռնաշխարհի հալար ու մի ծակուններում» (Բանբեր Հայաստանի արխիվների, 1979, № 3): «Ինչի՞» ես լռում,—աջ ձեռքը նա թափով մեկնեց Վոսմի կողմը:—կռալիցիա ես կադմել սոս հետ» (ԲԹ):

Դիմումի իմաստ են արտահայտում նաև ցուցական հետեյայ շարժույթները՝ աչքերով ցույց տալ, գլխով ցույց տալ, հոնքերի շարժումներով ցույց տալ, ձեռքը մեկի ուսին դնել, գլուխը դեպի մեկը թեքել (դարձնել), մեկի ուսը բռնել, գրեթե ամբողջ ուսը հրել. վերջին չորսին կանգնողներն իրենց տեղեկություն կա նաև ձեռքի ու թևի մասնակցությամբ մի այլ շարժույթ, որն արդեն ցուցական չէ՝ բաղուկները դեպի մեկը (կամ մի բան) պարզել: Բաղուկները միմյանց դռագահեռ առաջ են տարածվում. ափերն ուղղվում են միմյանց ու փոքր-ինչ թեքվում դեպի վեր: Այս շարժույթը բազմազանորեն արտացոլված է հնչյունական լեզվում: Կայուն բառակապակցություններում որպես զերակա անդամ հանգես են դալիս բազուկ, թև, ձեռք գոյականները՝ հոգնակի թվով, որոնց ընդգծման համար երբեմն սովելանում են «երկու» և «գույգ» որոշիչները: Որպես բայական անդամ հանդես են դալիս երկարել (երկնցնել), կարկառել, ձգել, մեկնել, պարզել, տարածել: Միջակայալ, պարզաբանող բաղադրիչներից են՝ դեպի մեկը, մեկի կողմը, առաջ, դեպի առաջ և ալն: Այսպիսով ունենում ենք բաղուկներ որևէ մեկին երկարել, երկու բաղուկները առաջ տարածել, ձեռքերը մեկին կարկառել, թեքվել մեկին պարզել, երկու ձեռքը առաջ մեկնել, դույզ թևերը դեպի մեկը տարածել և նման այլ բառակապակցական զուգորդություններ: Ինչպես. «Սարգս... Երկու ձեռքը ձգելով դեպի Միքայելը:—Վայ քու տիրու, Միխակ, վուր աշխրթի ափալը չեր չիս իմանում» (Գ. Ս.): «Կոմիտասը, հուզված, թևերը տարածեց և բառմությունը խնդրեց լսել իրեն» (Առ. Պ.): «Այվագովսկին կանգնել է՝ ձեռքերը ծովին մեկնած: Երջանկությամբ լի ձայնով նա շփում է ծովին: «Իմ հոգու ցանկալի սահման...» (Սովետական դրականություն, 1983, № 11): «Մովսես ապերը ...նրանց պաղղեց դողդողացող, կոշտուկաատ ձեռքերը:—Ինչի՞ եք ծիծաղում,—հեաց նա,—ինչի՞ եք ծիծաղում» (Ա. Ք.): «Ընկերներ, խոսողը ձեռքերը առաջ պարզեց, ասես նրա թևերին ինչ-որ հաճելի և թանկարժեք նվեր են դնելու,—արդուրսությունը պահանջում է ասել...» (ԲԹ):

Հեռվից դեմելու հոմանշային մյուս խմբում, որը բաղկացած է երկու շարժույթից, ձեռքը և թևը մասնակցություն չունեն: Առաջինում շարժասական հիմնական մարմնամասերն են վիզը և գլուխը՝ «վիզը (պարանոցը) դեպի մեկը երկարել (ձգել)» կամ, որ նույնի նկարագրական ձևն է՝ «գլուխը դեպի մեկը երկարել (առաջ լարել)»: (Վիզը ձգեղ դեպի առջևում նստած ժողովականը. «Դու էլ վեր կաց խոսիր»): (Գլուխն առաջ երկարեց դեպի ժանոթը. «Ժամը քանի՞սն է»): Երկրորդում, որը դործնականում շատ սովելի մեծ հաճախականություն ունի, ներգրավվում է նաև իրանը. շարժասողն իրանն ու գլուխը խոնարհում է դեպի առաջ՝ խոսակցի ուղղությամբ՝ բլմելով նրան: Կեցվածքն իր բազմազան նկարագրություններն ունի հայե-

րենում: Կայուն բառակապակցությունների մի մասում նշվում են «իրան» կամ «մարմին» դրականային անդամները, որոնց կարող է ավելանալ «ամբողջ» որոշիչը: Գործողությունը ցույց են առնում թերև, ծուկ, խոնարհել, ձգել, հակել, կռանալ րախորդ՝ ղեպի առաջ, ղեպի մեկը, մեկի կողմը մանրամասնող բաղադրիչներով. ամբողջ իրանով առաջ թերվել, ամբողջ իրանով ղեպի մեկը թերվել, ամբողջ ղեպի մեկը ձգվել, ամբողջ մարմնով մեկի կողմը թերվել. իրանը ղեպի մեկը ծուկ, իրանը ղեպի մեկը խոնարհել (թերել), իրանով ղեպի մեկը ձգվել և այլն, օրինակ. «...Գրիգորը ղեպից ղեպով մարմնով հաղում է.— էսօր երեկվանից բիշ եմ աղ ղեպի.— ասում է նա ամբողջ իրանով առաջ թերվելով» (ՍԶ), «Ջաբարյանը իրանով ձգվեց ղեպի հարց տվողը» (ՄԱ), Կայուն բառակապակցությունների մյուս մասում «իրան» և «մարմին» բաղադրիչները հանդես են գալիս, մնում են ավելի կարճ ձևեր՝ «առաջ թերվել մեկի կողմը, առաջ խոնարհվել ղեպի մեկը, թերվել ղեպի մեկը, թերվել մեկի կողմը, խոնարհվել մեկի կողմը, կռանալ ղեպի մեկը, ձգվել ղեպի մեկը և այլն: «Գրիգոր, որտեղից ևս առնում այս միսը,— դառնում է հանկարծ սպասափորեն:— Սաղաթսկի բաղադրից,— սլատասխանում է սպասափորը թերվելով և այնպիսի ձևով, կարծես տեղը ծանր է լսում:— Լավ միս է, բայց մի քիչ յուղոտ է: Սպասափորը ուղղվում է կտրված տեղը և նորից թերվում ղեպի տեղը:— Իրենի դուր ասա՞նք, ոտ ժարկոյի համար յուղոտ միս առնեմ» (ՍԶ): «Դուր ինչպես եր, տիկին, լսվ՛ք եր,— հարցրեց նա՝ սեղանի վրայից թեթև առաջ խոնարհվելով ղեպի Մանեն՝ նայելով նրա աչքերին» (ՆԴ). «Պետք է պակասեցնել,— ավելագործ Գարեգինը:— Կերը վերջանում է:— Ինչ...— Մարիամը կռացավ ղեպի Մանեի, — էդ ինչի՞ է կերը պործնում» (ՍԽ):

2. Իմաստ անմիջական յիման միջոցով: Ֆիզիկական շփումով դիմելու ին՝ եղանակներն են բազմազան, թե՛ շարժաստիճան խմբերը մեծաթիվ: Ուղղակիորեն չգալ տալու համար, թե եր իրարը հատկապես ում է ուղղված, շարժաստիճան դիմում է տարբեր գործողությունների՝ բռնել, դիպչել, հրել, խփել, ցնցել, քաշել, խթել և այլն: Պայմանավորված նշանով, թե այս գործողություններին յուրաքանչյուրին ինչ մանրամասներ են մասնակցել և ինչպես, առաջ են եկել այլևս շարժու թշնար:

Ա. Բռնել: Այստեղ կանգնողանք հանդիմանալու երև շարժու թշնար: Մի ղեպում դիմոր բռնում է հասցեատվորը ձեռքը (կամ ձեռքից)՝ աջով կամ ձախով. այս կեցվածքը կանոնարկված չէ, ազատ է, և տարբերություն ուղղորդելի նպատակով «ձեռքսեղմումի» (ՄԵ) էլ ձեռքս բռնեց.— Բոլ ա, ինչ որ ասիր, էդ էլ հերքե ա: ...Սա հմ գործը չե» (ԲԺՀ): «Հաջորդ օրը լսարան մտա, Ալիս Մանուկյանը բռնեց ձեռքս.— Խուբեն, երազիս քեզ եմ տեսել» (ՈԶ): «Սխալվա՛ն.— Սառա, հի՛շ պատահեց քեզ: Սառա.— (հանկարծ բռնում է նրա ձեռքից).— Լսիր, որ ամոսնանանք, պետք է հեռանանք այստեղից» (ՆԴ):

Մեկ այլ շարժու թշնար է, երբ շարժաստիճան դիմելու նպատակով բռնում է հաղորդակցի թեր (թերից) կամ բաղադր (բաղադրից) և կամ արմունկը (արմունկից): Օրինակներ՝ «Տատը մանրիկ քայլերով մոտենում է հայրիկին, և, բռնելով նրա արմունկից, հարցնում է.— էս ո՞նց կիսի, որդի» (ԺԱ), «Մտեցավ, բռնեց բաղադր...— Երիտասարդ քնկիր,— րսավ հեղնությունը,— ասացեք, խնդրեմ. ինչի՞ չեք ուղում սովորել» (ՎԵ): «Արտավազը բռնեց նրա բաղադրից:— Գետնի ինչ, մեր տունը մոտ է, կհանար, միշտ անձրևը դադարե՞լ» (ԱՍ): «Ուղիղն ասա, ...տիրում ես նրան.— հարցրե՛ք ես բռնելով նրա լեզու:— Ո՛ւմ համար ես ասում.— հարցրեց Լիդան թեր վրդովված խլիով ինձանից:— Դու ծաղրում ես ինձ,— ասացի կրկին բռնելով նրա թեր» (Շ): «Լսիր, Բաղենյան,— ասաց նա կամաց՝ բռնելով նրա թերից,— Լամ կարծիքով սերն աղբիլը չպիտի լինի բնի, որ շարունակես գործել հայրենիքի համար» (ՆԴ):

Հիստ երրորդ շարժույթի կատարման տեխնիկայի, դիմողը բռնում է մյուս հաղորդակցվողի ուսը (ուսից)։ «Հարված մատներով նա բռնեց խոհարարի ուսը.—Այս ի՞նչ ես անում, քեռի» (ՍԽ)։ «Հրաշյա ներսիսյանը անմիջապես բռնեց ուսս.—Սաղաթեի,—ասաց, ո՛չ, գոռաց,—նայի՛ր դռներ...» (ԳԲ)։ «Բարիկյանը սուր մտիկ տվեց նրա աչքերի մեջ և բռնեց Մեփրյանի ուսից.—Ասա, է, ի՞նչ է պատահել» (ԴԴ)։ «Գարեգին.—(Փառնակի ուսից բռնելով)։ Հսի մատղա՛շ, երեւում ա, էս աղատ կյանքը ոչ ձեզ ա ձեռ տալիս, ոչ քո վարպետին» (ԺՀ)։ Ավելի անմիջական լինելու համար շարժասողը բռնում է հասցեատիրոջ երկու ուսերը (ուսերից)։ «Արտու, դու կարծում ես, որ ես այդքան չե՞մ հասկանում,—ամուսնու ուսերից ամուր բռնելով և ուղիղ նրա աչքերի մեջ նայելով ասաց Աղգանուշը» (ՔԹ)։

Բ. Խփել։ Խմբին կանդրադառնա՛նք երկու շարժույթով։ Մի դեպքում խոսակցին դիմելիս խոսողն ուսով խփում է նրա ուսին, որ կատարման սուսակալան աստիճանն է։ Այս շարժույթն արտահայտվում է նաև՝ ուսել, ուսով ուսին տալ, ձևերով։ Կատարման մեղմ աստիճանն արտահայտվում է՝ ուսով մեկի ուսին դիպել, ուսով մեկի ուսին կպչել ձևերով։ Իսկ երբ հաղորդակցվողների ուսերը հպված են իրար, կատարվում է շարժույթի երկրորդ տարբերակը. շարժասողն այդ դիրքում ոչ թե խփում, այլ հրում է խոսակցի ուսը։ Սա հարում է հաջորդ կետին՝ հրել, Որինակներ. «—Երևում է մտքներումդ մի բան կա,—ուսելով ասում է Բաբկենը» (ԺՀ)։ «Սարոն կողքանց նայեց Ասթենիկին ...ու ծիծաղեց։—Ինչո՞ւ ես ծիծաղում,—հետաքրքրվեց Սաթենիկը՝ ուսով կպչելով եղբորը» (ՇԹ)։ «Մարգոն տեղավորվեց ամուսնու կողքին ու տխուր դեմքով հենվեց նրան։—Հը՛ր...—ուսով հրելով կնոջ ուսը բացականչեց Գուրգենը» (ՇԹ)։

Մյուս շարժույթի դեպքում խոսողը «ձեռքով (կամ ձեռքը) խփում է խոսակցի կողքին»՝ առավել կամ պակաս չափով ուժեղ՝ նայած հուզական վիճակին։ Հաղորդակցվողների դիրքով է պայմանավորված այն, թե դիմողը շարժանքի որ տարբերակն է կատարում՝ խփում է ձեռքի ափով, թե՛ երեսով։ «Մակարյանը... լռեց, հետո խփելով Արամյանի կողքին, ասաց.—Տուր ձեռքդ։ էհ, վաղուց էի վճռել, ...կընդունե՞ս քեզ մոտ» (ԲՎ)։ «Երկ. Փանոս—Լևոն ցալ։ (գրկում և ամուր համբուրում է ...խփելով կողքին)։ Հը, ո՞ւր ես, ո՞նց ես... Լևոն—Վա՛յ, կողքս... Զըլլա՞ թե մեր խելառ խաչոն է։ Երկ. Փանոս—Բա ես խաչոն եմ... (խփելով կողքին), Բա դու ինձ չե՞ս ճանաչում» (ԱՊ)։

Գ. Հրել։ Հրել կարելի է ձեռքի ափով, մատների ծայրով, արմունկով և այլն։ Ինչպես հայտնի է, հայերենում նշված եղանակներից յուրաքանչյուրը իր բառային արտահայտություններն ունի, որոնց մի մասին ստորև կանդրադառնա՛նք։ Ներգործել կարելի է հաղորդակցի տարբեր մանրամասների վրա. այստեղից էլ առաջանում են խմբի շարժույթները, որոնց տարբերությունները աչքի են դարձնում, շնայած գործողության լնդհանուր գծին՝ հրելուն։

Մունկը ևրել։ Նայած հրելու եղանակին՝ հիշատակվում են նաև՝ ծունկը բռնել, ծնկին խթել։ «—Կրակ է, տղա հո չի,—ասաց տան տերը՝ հյուրի ծունկը բռնելով» (ՎՀ)։ «Իսկ Ագիկ, որ կտենչալ դիտնալ, անդադար կխթիր պեկամուին ծունկին ու կհատցներ.—Ըսե, ըսե, պեկամու, ըսե դուն...» (Մ)։

Ուսը հրել կամ ոսր բռնել (մեկի)։ Տարբերակն է՝ ցուցամատով ուսը հրել (մեկի)։ «—Ինչո՞ւ ձայն չես հանում,—ամուսնու ուսը հրեց տեկին Վարդուհին» (ՔԹ)։ «Քեզ հետ եմ,—Բագրատը ցուցամատով հրում է ներսեսի ուսը» (ՄԳ)։

Կողմը (մեջքը) հրել։ Այս շարժույթում ամենից պարզորոշ են ի հայտ գալիս սույն կետի խմբի առանձնահատկությունները։ Շարժանքն ունի երկու առարկայով՝ պայմանավորված մեկը՝ կողք, մյուսը՝ հարակից մեջք մաքմամասերով։ Տարբերակները բաժանվում են ենթատարբերակների, կախված այն բանից, թե ինչպես է կատարվում ներգործությունը։ Ենթա-

ս.ս.բ.ի երա.կե.կ.ր. չնչյունական լեզվում արտացոլված են դանապան բառա-
յին միավորներով: Այն ներգործումը կատարվում է ձևաբով, գործածվում
են՝ բոթի, բբգ(թ)ի, դրդի, բշտի, հրի բայերը՝ «կողը» («կող»), «կունակ»,
«սեջը» գոյականների հետ: Սրինակներ. «Մկրտիչը լոթեց ընկերոջ կող-
ը».— Այն հասց դա էլ Շերամն էր» (ՎՏ): «Զարիկը թեթև գրգեց Ամայայի
կողը և փսփսաց:—Մի փսփսաք աղջիկներ, —ասաց Հայկուշը» (ԳԳ): «Տանն
ասացի, որ պարարեր ունեմ, որ եթե շահնձնեմ՝ դուրս կմնամ: Մայրս հրեց
կողս.—Պարապիր» (ՀՄ): «Կողք» գոյականը կարող է հանդես գալ նաև
տրական կամ բացառական հոլովով. «Հնկերս բոթեց կողքիցս և ասաց.—
Տեսնո՞ւմ ես, մենք քո այն ճանաչած բուրժուաների պես չենք, ամեն բա-
նում հավասարություն» (Շ): Եթե ներգործումը կատարվում է մեկ մասի
կամ մասների ծալով, գործածվում է բզի, բթի, խթի, մխաի, մշաի
բայերը: «Տես, —ասում է Հայկը,—կողս մշտելով,—փշքան լավն են... ոս-
կեզւյն մաւերով աղջիկներ...» (ՆԱ): Հաս ողում, բառային միավորների
մի մասում գոյականային անդամներ չկան, միայն բայական անդամներ
են, և հետագայում է համարվում, որ խոսքը կարող է վերաբերել թե՛ մեկ,
թե՛ մյուս տարբերակին, այսինքն, թե կողքին, թե մեջքին: «Հե՛յ ինչի՞
մոտի՞ք կախեցիր, քեֆ ու հարսանիք է,—հարցրին ըզեց հարևանը» (ԳԳ):
«Լսում ես,—Աղվանը բղում է Սուրենին» (ԱՍ): «Թաղեոս (Սուրենը մշտե-
լով) Հողի՞ սիրես, աս ի՞նչ կրես» (ԱՌ): Նույն կերպ և բոթի, դրդի, հրի
բայերի դեպքում. «Բան հասկացա՞ր,—բռնում է Սև Սաքոն ընկերոջը:—Հա,
պարը հայերեն թարգմանեց» (ՄՆ): «Մական. (Տեսնելով նապարհ... դը-
րում է լր սոս նա.ած հյուրերից մեկին) ո՞վ է» (ԳԳ): «Մի շատ խոշոր
այծ կանգնել էր լեռան գագաթին: ...—Ճերմակն է,—հրեց ընկերոջս: Նա-
յեց...» (ՎԱ):

Արմունկով հրել: Սա շարժույթի յուրահատկությունն է, ի տարբերու-
թյուն նախորդ երեքի, երբեք գործումը կատարվում էր ձևաբով, մա-
տի կամ մատների ծալով: Դիմողը հիմնականում ներգործում է հասցա-
տիրոջ կողքին, երբեմն՝ թեթև: Արտացոլող բառակապակցություններում,
երոնք կառուցվածքով հիշեցնում են նախորդ շարժույթի բառակապակցու-
թյունները, գերակա անգամն է «արմունկ» գոյականը՝ գործիական հոլո-
վով, բայական անդամները նույնն են: Փոփոխություն են արմունկահարե-
լարմանը բա.երը: Ներգործումը կատարվում է երեք կերպ՝ հրել, ճշել,
խփել: Հրելու եղանակն արտացոլված է հետևյալ բառակապակցություննե-
րով. արմունկով (կողքը) բռնել, արմունկով (կողքը) հրել, արմունկով հը-
մըշտել: Ինչպես. «Ես նստած տեղս անհանգիստ շարժումներ էի անում:—
Ի՛նչ է պատահել,—արմունկով բռնում է ձախ կողքիս նստած հարևանը»
(ՀՅՄ): «Քիլոյան.—Պե, լսում եմ: Ի՞նչ—(արմունկով հրում է Կնյային)
ևոսիր: Կնյազ—Ընկեր ֆիլոյան...» (ԺԱ): Արմունկով ճշելու բառակապակ-
ցություններն են՝ արմունկով խթել, արմունկով կողքը բզել, արմունկով
բզել, արմունկով մշտել: «Մեծ հետաքրքրությամբ հետևում է կողքից քայ-
լողներին և արմունկով անընդհատ բղում ժաննայի կողքը.—Տես, տես...
ժանո, ժանո, էն կողմը նայիր...» (ԱՆՍ): «Արմունկով խփել» եղանակը
հարում է նախորդ կատի շարժույթներին՝ արտացոլվելով հետևյալ կերպ.
արմունկահարել, արմունկով զարկել, արմունկով կողքին խփել, արմունկով
(կողքին) դիպչել, արմունկի հարված. «Արմունկով զարկավ ընկերոջը.—
Նայե, նայե, խիսանուհի ֆոն Թուրսիկը նորեն աճուրդ է հանել իր կուրծքն
ու ի՛կունքը» (ՀՇ): «Էդ Անուշավանի առաջարկությունն է...—արմունկով
խփեց Անուշավանի կողքին,—ասա, է» (ԱԱ): «Արմունկով դիպչում եմ Անի-
կին.—հանգամուրը:—Ո՞վ, ո՞վ, ո՞ւր է...» (ԱՆՍ):

Արտացոլող բառային միավորներից «արմունկ» բայը ընդհանուր ի-
մաստ ունի, այսինքն՝ չի մասնավորեցնում, թե ներգործումն ինչ կերպ է
կատարվում (հրել, խփել, խթել): Այդ պատճառով էլ վերաբերում է բոլոր
երեք եղանակներին: Այսպես, հետևյալ մեջքերումներում չի կարելի որո-

շակի ասել, թե դիմողը հատկապես ինչպես է շարժասում, «Ճիշտ-ճիշտ, ի՞նչ ես ստացել,—շունչը կուլ տվեց,—ի՞նչ ստացար,—արմնկեց Արմային» (ՄԳ): «Երկրորդ հարկի նախասրահում սիրալիր ողջունեց մի մարդու, ինձ արմնկեց,—կավ նայիր... Չարենցն է» (ՀԶՄ):

Գ. Թալալյանի: Այս գործողության հետ կապված կանգրադառնանք երեք շարժույթի: Նախ՝ դիմողը թափահարում է խոսակցի խելք: Շարժանքը ներսուռում է նրեք տարբերակ, որովհետև շարժասել կարելի է՝ բռնելով աղորդակցի ձևեր, դաստակը կամ թևեր: Կերջին բառը որոշ բառակապակցություններում փոխարինվում է «բազուկ», «կուռ» հոմանիշներով, Կատարման թույլ աստիճանը արտահայտվում է «շարժել», «ցնցել» բայերով, ինչպես. «Անտոն. (բռնելով Մարմարյանի ձեռքը) նրա գեղեցկությունն ու երկտառադուրությունը... զարթեցրին սարսափելի նախանձ: (շարժելով նրա ձեռքը) կտո՛ւմ ես, լսո՛ւմ ես» (Ն): «Ի՞նչ է ասում, Եղիշ,—Եղիշի թևեր ցրելեց 'Իներենիկը» (ՄՄ): Կատարման սաստկական, ուժգին աստիճանն արտահայտվում է թափ տալ, թռթռել, թափահարել բայերով: «Անդրանիկը բռնեց իր ասածները թարգմանող Քաջունու թևը, թափահարեց.—Մի անգամ էլ ասա այս ծովափն պարոններին, որ Հայաստանը կործանվեց նաև իրենց պատճառով» (ՆԽ): «Քուլիստ (Միքայելին).—Քո հայրը անունով մարդ է, ինչո՞ւ չօգնեց մեզ: (Թափահարում է նրա թևը): Քեզ հետ եմ» (ԶԽ): «—Հովհաննես, տեղարկե՛ս, տես...—ուրախությունը կթոթվի իր թևը և մատով ցույց կուտա՛ր» (ԱՍ):

Դիմողը թափահարում է, մեղմ՝ կատարման դեպքում շարժում կամ ցնցում է խոսակցի ծունկը: Սրինակներ. «— Հետո՞... հետաքրքրվի՛ց Խիսանց մեծ հարսը, Եղսանի ծունկը շարժելով...» (ՍԶ): «Խնամի Ավետար կըրկին ձեռքդ, թափահարեց Մովսեսի ծունկը» (ԶԽ):

Երրորդ դեպքում դիմողը թափահարում (շարժում, ցնցում) է խոսակցին: Այստեղ գործ ունենք մարմնաշարժանքի հետ, իբրև ավելի աղդեցիկ եղանակ նախորդ երկու շարժանքի համեմատությամբ. «Մանվելը մոտենում, թափահարում է Սամվելին:—Լո՛ւրջ ես ասում» (Բ): «Բա ինչո՞ւ չես հարցնում, թե ի՞նչ հրաման եմ տալիս, ի՞նչ եմ կարգադրում, հը՞, ինչո՞ւ չես հարցնում... համառեց ու ցնցեց թոռանը,—հը՞...» (ՄԳ): «Արամ. (Ախսակը ցնցելով)—Հը, չխոսի՛ս, ի՞նչ ես նորեն պաղեր մնացեր» (ԱԸ): Տարբերակներից մեկում դիմողը բռնում է հաղորդակցի մեկ ուսից, մյուսում՝ երկու ուսից: «— Ի՞նչ է պատահել, ի՞նչ է եղել, ասա,—Արմենուհին ցնցեց պատանու ուսը» (ՍՀ): «— Քեզ հետ չե՞մ, այ մարդ,—բարձր ձայնով կրկնեց պոպոզավորն ու թափ տվեց Կիկոսի ուսը» (ՄԴ): «— Հիմար ես,—ըսավ ժպտուն, շարժելով ղիս ուսերես,—բալե, երթանք քաղաք» (ՎՇ): «Սեծ աղջրկա հետ ես ձրի էլ կպարապեմ, ...դասը՝ մի համբույր,—կրկնում է Տիգրանը, ծիծաղում է և ուսերս բռնելով՝ ցնցում:—Հը՞, դու չե՞ս պարապի այդ պայմանով» (ՍԶ):

ԴԻՄՈՒՄԻ ՈՒՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ: Դիմելու շարժասական հոմանշային շարժն այժմ դիտարկենք դիմումի ուղղվածության տեսանկյունից, այսինքն՝ կախված այն բառից, թե կատարելիս դեպի ո՞ր կողմն է ուղղվում շարժումը: Շարժելով շարժույթների մեծագույն մասի դեպքում, շարժասողի շարժումներն ուղղվում են դեպի առաջ, կողմ կամ միաժամանակ դեպի առաջ ու կողմ: Այդպիսիք էին մինչև հիմա քննության առածները, այդպիսիք կլինեն հաջորդ՝ «Դիմումի լնդդովածությունը» ենթավերնագրի տակ: Ուստի այս երկու ուղղություններին՝ առաջ և կողմ, առանձնակի շենք անդրադառնա:

Ամբողջ շարժից առանձնանում է երեք հոմանիշ, որոնց կատարման դեպքում շարժասողի շարժումներն ուղղվում են դեպի հետ: Դրանք են՝ «արմունկով հրել», «ուսից հետ նայել», «մարմնով հետ շրջվել (կիսաշրջվել)»: Ժիշտ է, «արմունկով հրել» շարժանքին առավել բնորոշ է շարժու-

մը դեպի կողք, այդ պատճառով էլ դրանք անդրադարձանք «անմիջական շփման» Գ. կետում: Սակայն պակաս չեն նաև այն դեպքերը, որոշ շարժաստղի խի շարժումն ուղղված է միաժամանակ դեպի հեռու կողք կամ պարզապես դեպի հեռու: Այդ հանդիմանքները պայմանավորված են հաս-
նակաբնակչության բնական, արդյունք նա դիմողի անմիջական կողմից է, թեև նրա-
նից փոքր-ինչ հեռու:

«Աստիճանաբար» շարժաստղն աջ կամ ձախ ուսի վրայից դուրսը շրջում է դեպի հեռուում եղող հասցեատերը և աջ կեցվածքում մնում մինչև լրացական շարժումը ավարտի: Կեցվածքը մեր լեզվում արտացոլված է քիչ խիստ բառակապակցություններով: Պարզ (դեմք) շրջել դեպի հեռու, ետ (հեռ) նայել, հեռ (ետ) շրջվել, ուսից հեռ նայել, ունենք նաև մեկ մակ-
րայական բառակապակցություն՝ «ուսի վրայից»: Օրինակ. «Աստիճանա-
բար»-ի վրա հասցեում է: Երեխային պինդ դրկել ու դանդաղ խնամել է:—Կարող եմ փողով օգնել,—ասում է ուսից հեռ նայելով» (ԿԸ):

«Աստիճանաբար» շարժումը նախորդի շատ ավելի մեծ ծավա-
լով կատարում է: Շարժաստղը դեպի հեռում եղող հասցեատերն է շրջում
և միայն դեմքը, այլև իրանը՝ դոտկատներով: Այս դիրքում հաճախվում է
անհրաժեշտ իրադրություն: Կեցվածքը հնչյունական լեզվում դարձյալ քիչ
է արտացոլված. մարմնով հեռ շրջվել, երեսը և մարմինը կես դարձնել
դեպի մեկը, հեռ շրջվել, կիսաշրջվել դեպի մեկը, կիսաառ շուրջ դալ, կիսո-
վել ետ (հեռ) ծռվել, կիսով չափ հեռ շրջվել, ինչպես. «Առջևից բայցով
վարպետը հեռ շրջվելով, ուրախ բացականչեց.—Առջևից լույս, իշխաններ,
այստեղ աղբյուր կա» (ԿԸ): «Փռնարն ինձ չի նայում, առանց իմ կողմը
շրջվելու թաքցնում է լեզուս: ...Պաշտպան եմ կանգնում մեր ուսանողին.—
Սխալվում եք, ...—Իսկապես»,—Փռնարը կիսաշրջվում է, ուրախ դարձանքով
վերապահ նայում է ինձ» (ԿԸ): «Ետ-հետ կիսաշրջվեց դեպի ինձ: Երևի
բան էր ուղում ասել: Իսկույն թեքվեցի դեպի նա:—Այդ մարդուն ճանաչում
եմ»,—հարցրեց նա» (ԳԲ): Բնական է, որ դեպի հեռ ուղղված շարժումների
խիստ այսքան քիչ է, իսկ արտացոլումը հայերենում՝ նվազ. կյանքում ես
մեծ մասամբ դիմում ենք առջևում կամ մեր կողքի եղողին, իսկ հեռում
ևղածին՝ անհամեմատ պակաս:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԴԳԾՎԱԾՈՒԹՅԱՆ ՉԱՆՈՒՄ: Հոմանշային այս շարքը բնական
հեռ է նկատել շարժումների հետևյալ հատկանիշը. դրանց մի մասը դի-
մումն արտահայտում է առանց ընդգծման, մյուսները՝ ընդգծված, երրորդ-
ները՝ խիստ ընդգծված: Առանց ընդգծման շարժումները կատարվում են
մեղմ, ճիշտ արտահայտում են թեթևակի, և խոսողին բավարարում է,
որ այն արդեն ընկալելի է: Որոշակի տարածությունից կատարվող շար-
ժումներից վերցնենք գլուխը դեպի մեկը թեքել: Դիմողը, դուրսը փոքր-
ինչ աջ կամ ձախ թեքելով, դեմքը դարձնում է հասցեատիրոջը, դրանով
բացահայտում, թե իրադրությունում է ուղղված: Արտացոլող բառակապակ-
ցություններում գերակա անգամներն են՝ գլուխ, դեմք, երես գոյականները.
բայական անգամներն են՝ դարձնել, թեքել, ծռել, շրջել, շուրջ տալ: Կան
բացատրող, լրացուցիչ բաղադրիչներ՝ դեպի մեկը, մեկի կողմը, մեկին.
որով ունենում ենք. գլուխը դեպի մեկը դարձնել, դուրսը մեկի կողմը շրջել
(շուրջ տալ), գլուխը մեկին դարձնել և այլն, ինչպես. «Հստակ ես, չէ՞...—
Մուշեղը դուրսը թեքեց դեպի Վարդանը,—լսում ես, չէ՞, ինչ է ասում»
(ԳԲ): «Ժամը ութին ես ու Չուբարը սպասելու ենք Չարենցը... հետո գլու-
խը դեպի կտրվանը շրջեց:—Լսիր, Վարդան, Եթե Հուրենտը երեկոյան դադա-
ված է խմբագրությունում, ուրիշով փոխարինիր» (ԳԲ): «Երկուսն էլ դու-
րսը դեպի խորքի սենյակը շրջեց:—Իդարելալ,—ձայնեց,—աղջկանը բեր այս-
տեղ: Գլուխը հիմա էլ Չարենցին դարձրեց,—կես՝ թող բերի» (ԳԲ): Կամ.
Դեմքը դեպի մեկը դարձնել, դեմքը մեկի կողմը շրջել (շուրջ տալ), դեմքը
մեկին դարձնել և այլն. «—Կշափաղանցեք,—բռնով վերապահ... թեթև մը
դեմքը դեպի խոսակիցը դարձնելով» (ԼԸ): «Անհկողմ-մանեկդոտ չկա՞:—

կա, վարպետ, իսահակյանը դեմքը շրջում է դեպի խոսողը,—որ կա, ինչի՞
 ևս պահում, պատմիր» (ԳԻ): Եվ կամ. Երեսը դեպի մեկը դարձնել, երեսը
 սեկի կողմը շրջել (շուռ տալ) և այլն. «Միրդոն էլի ձեռքն առավ լիքը բա-
 յակը— Երեսը դեպի Չարենցն ու Աստվածատրյանը դարձրեց.— Եղիշե Չա-
 րենց, կենացդ: Արփենիկ Աստվածատրյան, կենացդ» (ԳԲ): «էֆեսդին երե-
 սը շուռ տալով դեպի գյուղացիների խումբը, ասաց.— Ա՛խ, ... դուք ե՞րբ
 պիտի խելքի դաք» (Դ):

Անմիջական շփումը նույնպես հասցեատիրոջ համար կարող է լինել
 հաղիվ զդալի կամ խիստ զգալի՝ նայած թե ինչ շարժույթ է գործածում
 դիմողը: Երբ նա ձեռքով դիպչում է խոսակցի արմունկին կամ թևին, այս
 շարժանքով դիմում է առանց ընդգծման, որ պահանջվում է իրադրությամբ,
 հուղականությամբ, դեպի հաղորդակիցն եղած տրամադրվածությամբ և այլ
 պատճառներով: Շարժույթն արտացոլող բառակապակցություններում «գիւղ-
 շն» բառի փոխարեն որոշ դեպքերում հանդես է գալիս «կաշնել» հոմանիշը,
 իսկ «ձեռք» գոյականային բաղադրիչը կարող է լինել կամ չլինել. օրինակ-
 ներ. «Սվասանան կարծես ակամա դիպավ Ասքանազի թևին ու մրմնջաց.—
 Զեզ բարի գիշեր մաղթեմ: ... Ես ձեզ խանգարում եմ» (ՀՄ): «Տեսանք, որ
 օդում լայն պտույտներ էին գործում երկու խոշոր թռչուն... Կարծես արծիվ
 լինեն, փառե՛ս,— ձեռքը թևիս դիպցրեց Արշամը... Նայելով ցած նետված
 ահագին խռչունին, նորից ձեռքը գիւղցրեց ինձ շնջալով.— Արծիվ է, կար-
 ծես» (ՍԶ):

Իբրև մեղմ դիմելու անմիջական շփումով մեկ այլ եղանակ՝ այլ շար-
 ժանք, հասցեագրողը ձեռքը (ափը, մատները) դիպցնում (կպցնում, հպում)
 է հաղորդակցի ուսին. «Ափը զգուշորեն դիպցրեց ուսին.— Կեսանք ինձ հետ»
 (ԱՆ. Ս): «Ժիշկը թեթևակի ձեռքը դիպցնելով տղայի ուսին,— ասաց.— Իսկ
 հիմա գնա տուն, փոքրիկ, ուշ է...» (ՇԽ): «Սաղաթելյանը մոտեցավ իրեն,
 ձեռքը հպեց ուսին» (ՄՄ): «— Այստեղ դուրս գանք,— մատները նրա ուսին
 դիպցրեց Ժիրաթը» (ԱՆ. Ս): «Այն ատեն մոտեցա իրեն, ուսին թեթև դպա և
 ըսի իրեն.— Հետո խանութ մտիր, քեզի՝ համար ուզածիդ շափ ապուխտ կը
 դնեմ» (ՍՇ):

Անմիջական շփումով մեղմ դիմումի շարժույթները ենթադրում են հա-
 ղորդակցվողների նույնպիսի մեղմ հարաբերություններ, մտերիմ կամ պար-
 զապես նրբանկատ վերաբերմունք: Ուստի համապատասխան նկարագրու-
 թյան նախադասություններում շատ հաճախ գործածվում են՝ զգուշ, թե-
 թևակի, մեղմ, մեղմորեն, քնքշորեն, կամաց ու նման մակբայներ, որոնք
 առկա է՛լ վերը բերած օրինակներում: Ինչ խոսք, անմիջական շփումով
 առանց ընդգծման բոլոր շարժույթները չէ, որ դիմելու մեղմ ձևեր են: Այն-
 պիսի: շարժույթներ, ինչպիսիք են մատը մեկի կրծքին դնել, մեկի կոճակից
 բռնել, ցուցամատով մեկի ուսին խփել նրբին վերաբերմունք կամ զգուշու-
 թյուն չեն արտահայտում, այլ ուղղակի դիմում՝ առանց ընդգծման:

Ընդգծված կերպով դիմելիս շարժասողը կատարում է որոշակիորեն
 ծավալուն, եռանդուն շարժույթներ, ձգտում է, որ հասցեատերը ոչ միայն
 ընկալի, այլև շեշտված կերպով զգա, թե իրագեկումն իրեն է վերաբերում:
 Առանց ընդգծման դիմելիս բավարար էր թևին դիպել, ձեռքը ցնցել (մե-
 կի), դուրի՛ր դեպի մեկը թեթև շարժանքները. այժմ կատարվում են նըշ-
 վաների: նման, բայց շատ ավելի զգալի և ակտիվ առ շարժանքներ՝ թևին
 խփել, թևը թափահարել, դեմքը դեպի հետ շրջել: Ընդգծված բնույթի է
 դիմելու շարժույթների մեծագույն մասը՝ թվով սպիկի շատ, քան առանց
 ընդգծման և հաջորդ՝ խիստ ընդգծման շարժույթները միասին վերցրած:
 Շարադրանքում արդեն հիշատակվածներից ընդգծված բնույթի էին նաև՝
 ձեռքը դեպի մեկը պարզել, ծունկը թափահարել, ուսով խփել մեկի ուսին,
 մեկի ուսը բռնել, ձեռքով կողքը հրել, ցուցամատով ուսը հրել: Խիստ ընդ-
 գծման դիմումի շարժույթները կատարվում են էլ ավելի մեծ ծավալով ու
 եռանդալի շարժումներով: Հստ որում, դրանց մի մասը դիմումի հետ մեկ-

տեղ արտահայտում է դառնազան բուռն հույզեր, ուրախութիւն, սեր, բարկութիւն, կոպտութիւն կամ ուղղակի աներբանկաւ վերաբերմունք: Մարմնագիտութիւնը չի ձգտում սքողել կամ մեղել իր հույզերը, այլ շահում է զրանք ամբողջովին հասցնել հաղորդակցին: Այսպիսի հուզական շարժութիւնները նկարագրող խոսքում շատ հաճախ դորժածովում են ամուր, սրնդ, ուժղին ու նման ալ մակրայններ: Գիմեկու ցայտունորեն շեշտում է իր արամագրովածութիւնը: Ահա որոշակի տարածութիւնից կատարուող հետեւյալ շարժանքը՝ ձեռքը մեկի աչքը կոխել կամ, յոշակա արտացոլած է այլ կերպ, ձեռքը մեկի դէմքին մեկնել (մոտեցնել): Խոսքը, ինչ ատաղ տարածութիւն, մասնակցի ծաղիկը մոտեցնում է դիմացինի աչքերին: Հուզականութեան պատճառով իմում է, ինչ հաղորդակիցներին բաժանող փոքր տարածութիւնը կզեղան, և շարժանքը կզերծվի տեմիչական շփման: օրինակ. «...էն տարին մեր ցորենը ծախել տվին, ասեցին, որ սով ընկնի, ետ կտանք...» — Տո, չէ, չէ... — ձեռն մեկը աչքը կոխել շարժում, — Երեւոյ անունը հայ կտ, ...իմացել են, որ մեր կողմէր սով ա ընկել, հայ ետ տվարել, փող են հավաքել, դարկում են» (ԱԲ): «— Յա, սո հյա սպասիր, — որտաղ ետ սոսկալի վրդոված՝ յահալալի ձեռքը մեկնելով քաղաքուղտի գեմքին — Երա, դու էդ ում ետ ամոխնք տալիս: Ետն աղխատանք է... Այ դու, դու, — ետ նորից քարսուղարի գեմքին մոտեցրեց հակալական բաղալի ձեռքը, — էստեղ նաւած ինչքա՞ն ետ ստանում» (ԱԶ):

Անմիջական շփման երկու շարժումիւ կրաջներ՝ «ծոճրակից բռնել (նույն է վելց բռնել իւր ալ կերպ՝ ձեռքը մեկի պարանոցին պցել): Ստիչն իշաւաւովով երկու մեքիւրումներից մեկում շարժումը պարզալ արտահայտում է դուպտութիւն, մշուում՝ ոչ, միայն մասնատնում է դիմումի խիստ. ընդգծում: Ակրմեն — (Տաճարի ծոճրակից բռնելով) Ինչէ՛ նայէ, ջանք, ինչո՞ւ չես թողուր բնիմ, ի՞նչ կուզես ինձս, — Տաճար — Ես, ետ ոչինչ... — Ակրմեն — Ես գնամ: Լուսինյան — (բռնելով Ակրմենի ծոճրակից) Ե՛լ, աղալիք: (ԱԳ): «Գեղամ Մինասիշը ձեռքը պցել վարաղալի պարանոցին» (ԿԱ):

Երկրորդ շարժումիւ՝ ամեկի օձիքը (կամ օձիքից) բռնել: Հուզականում են նաեւ հետեւյալ նկարագրումները. օձիքը բռնել մեզ հովաքել, օձիքը (բուր) հովաքել, օձիքից կտրել, երկու ձեռքով օձիքը բռնել: Այլ տարիներ. «Ետն պակունի. ետ աւա-տա-տարալ ձեռքի-գի-գի-գի-սերտացիան... Մտախոշաւ...» (Մանգակունտ օձիքը բռնելով) Ի՞նչ տարալ, ո՞ւր տարալ պարտածոված արարած: Գայանէ. — (Բռնելով Մանգակունտ օձիքը) Ի՞նչ է նա, սո՛ւր է նա... (ԺԶ): «— Ինչո՞ւ կրալեցիր, ինչո՞ւ փախցրիր, — պոթկալ Արսենը՝ տնտառապալի օձիքը հովաքելով» (ՎԲ): «Խաֆայի — (պիեղ բռնում է վի-գենի օձիքից) Լսիր, որդիս, Եթե քեզ ինքնատահմանափայման շփածնեւ, երջանիկ չես վինի կյանքում» (ԳԶ): Առանց այլ էլ խիստ բնգծման դիմումն ավելի է ընդգծում, երբ շարժաստղը կատարում է սույն շարժումի մշուը տարբերակը՝ օձիքը (օձիքից) բռնել ու թափահարել. կեցումը վարածովում է մարմնաշարժանքի: Արտահայտում է նաեւ խափ տալ, ցույց բայերով. «Գնել բռնեց խեղճ տղայի օձիքից ու սկսեց ցնցել. «Եսկ դու չե՞ս ստում...» (ՍԶ):

Երեւոյ ընդգծված կերպով գիմեկիս բաղալար են, օրինակ, վելը դեպի խոսակիցը մեկնել, ձեռքը բռնել, ձեռքը դեպի մեկը պարզել, փելը քաշել շարժութիւնները, աղա ալս տարբերակում կատարում են նշվածներին նման, բայց շատ ավելի եռանդաղին ու ակնբալս հետեւյալ շարժումները՝ մարմնով (իրանով) դեպի խոսակիցը թեքվել, ուսերից բռնել, բաղուկները դեպի մեկը (մի բան) մեկնել, օձիքը բռնել-թափահարել: Կարելի է ցույց տալ սաստկութեան եռաստիճան կաղմող շարժումներ՝ թեքն դիպել (առանց ընդգծման) — թեքն խափել (ընդգծման) — կողքիս խափել (խիստ բնգծման): Ահման նույն հերթականութեամբ նաեւ՝ ձեռքը ցնցել-թեքն թափահարել-ու-

սերիյ բռնել ու թափահարել, գլուխը դեպի մեկը թեքել-դեմքը դեպի հետ շրջել—մարմնով կիսաշրջվել (շրջվել)։

Եվ այսպես. դիմելու շարժասական հոմանշանին շարքը մենք քննություն տալիս երեք տեսանկյունից, շարժությունները կատարվում են որոշակի տարածությունից (բազուկները դեպի մեկը (մի բան) պարզել) կամ անմիջական շփման եղանակով (ուսից բռնել), ունեն կատարման ուղղվածություն՝ մեծագույն մասամբ դեպի առաջ կամ կողք, և միայն երկուսը՝ «դեմքը դեպի հետ տարձնել» մարմնով կիսաշրջվել դեպի հետևում եղած հասկանալիցը՝ «դեպի մեկը», տարբերվում են ընդգծվածություն աստիճանով և լինում են՝ առանց ընդգծման (ձեռքը ուսին դիպցնել), ընդգծված («թևը բռնել») և խիստ ընդգծված («օձիքը բռնել և թափահարել»)։ Ստորև բերում ենք ներկայացված 41 շարժությունից ալբոմական ցանկը՝ բաժանելով ըստ շարժումային լեզվի դրսևորման միջոցների։ Շարժանքներ (ժեստ)։ արմնկահարել, գլխով ցույց տալ, գլուխը դեպի մեկը թեքել, թևը թափահարել (մեղմ աստիճանը՝ ձեռքը ցնցել), թևը (արմունկը) սեղմել, թևին դիպել, թևին խփել, թևից (թևից) քաշել, ծնկին խփել (մեկի), ծունկը թափահարել, ծունկը հրել, կողքը հրել (բզել), կողքին խփել, ձեռքը դեմքին մոտեցնել (սաշքը կոխել), ձեռքը դեպի մեկը (մի բան) պարզել, ձեռքը ուսին դիպցնել, մատների ծայրով մեկի մարմնին մի քանի անգամ խփել, մատով ցույց տալ, մատով ուսին խփել, ցուցամատով մեկի կրծքին խփել, ցուցամատով ուսը հրել, ուսով ուսին խփել, փեշը քաշել։

Մարմնաշարժաններ. թափահարել մեկին (ուսերից կամ կողքերից բռնելով), օձիքը բռնել և թափահարել։

Դիմախաղեր. աչքերով ցույց տալ, հոնքերի շարժումներով ցույց տալ։ Կեցվածքներ. ամբողջ մարմնով (իրանով) դեպի խոսակիցը թեքվել, բազուկները դեպի մեկը (մի բան) տարածել, դեմքը դեպի հետ շրջել, թևը բռնել, ծոծրակից բռնել, կիսաշրջվել դեպի մեկը, կոճակից բռնել, ձեռքը բռնել, ձեռքը թևին դնել, ձեռքը մեջքին դնել, ձեռքն ուսին դնել, վերը դեպի խոսակիցը երկարել, ուսը բռնել, փեշը բռնել։

Այսպիսով, 23 շարժություն շարժանք է, երկուսը՝ մարմնաշարժանք, երկուսը՝ լեզվաբանական 14-ը՝ կեցվածք։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱ — Նորար Աղալյան, Ընտիր երկեր, Ե., 1986։

ԺԱ — Ժիրար Անանյան, Տաքսի, տաքսի..., Ե., 1996։

ՎԱ — Վախթանգ Անանյան, Լեռներ հայրենի, Ե., 1963։

ԱՌ — Առանձաք, Երկեր, Ե., 1987։

ԺԱՎ — Ժիրար Ավետիսյան, Պատմվածքներ, Ե., 1969։

ԱԱ — Ալեքսանդր Արաքունյան, Ոստան, Ե., 1982։

ԳԱ — Գևորգ Արշակյան, Դադի բույրը, Ե., 1972։

ՄԱ — Մկրտիչ Արմեն, Պատմվածքներ, Ե., 1957։

ԳԲ — Գարեգին Բեա, Խմ Չարենցը, Ե., 1979, Հուշանովելներ, Ե., 1980։

Բ — Գուրգեն Բոբյան, Ընտիր երկեր, Ե., 1966։

ՄԳ — Մուշեղ Գալչոյան, Բովտոն, Ե., 1974, Պայուսակը, Քաթրի կողք, Ե., 1986։

ԳԳ — Գալուստ Գալստյան, Երկեր, Ե., 1966։

ԼԴ — Մաթևոս Դարբինյան, Կիկոսը, Ե., 1961։

ԴԴ — Դերենիկ Դևիրճյան, Երկերի ժողովածու, հ. 6, Ե., 1969։

ՌԶ — Ռուբեն Զարյան, Հուշապատում, Ե., 1985։

ՊԶ — Պերճ Զեթունյան, Մեծ լուսնի, Ե., 1985։

ՍԶ — Ստեփան Զորյան, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1954։

ՇԲ — Շահեն Թաթևյան, Ընտիր երկեր, հ. 1, 2, Ե., 1987։

- ՔՔ — Քրիստափոր Թափալցյան, Կյանքի արշալույսը, Վիկտորիա, Ե., 1981, Ոսկե Ճեպիկ, Ե., 1955:
- Վա. Թ — Վահան Թամարյան, Հրաշքների օր, Պատմվածքներ, Ե., 1957:
- ԲԹ — Բաղդասար Թովիկ, Սրբադան վրէժ, Ե., 1986:
- ՎԹ — Վալտեր Թորոսյան, Կենդանի թիրախ, Ե., 1970:
- ԽԺՀ — Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Ե., 1969:
- ՀԹ — Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Ե., 1968:
- Զե — Զորաշր խալափյան, Մեծղա (Սովետական գրականություն, 1982, № 8):
- Սե — Սերո Խանդավյան, Հողը, Ե., 1968:
- ԱՄ — Անդրանիկ Մասուկյան, Մանկություն չունեցող մարդիկ, Ե., 1983:
- ԺՀ — Ժորա Հարությունյան, Երկեր, Ե., 1988:
- ՈՀ — Ոսկայիկ Հարությունյան, Վիպակներ, Ե., 1982:
- ՎՀ — Վաղինակ Հովակիմյան, Արյունոտ ամուսն, Ե., 1984:
- ՂՀ — Ղուկաս Հովհաննիսյան, Սասունը բոցերի մեջ, Ե., 1937:
- ՀԶՄ — Հուշեր Եղիշե Զարենցի մասին, Ե., 1986:
- ՀՄ — Հրանտ Մախկոսյան, Օգոստոս, Ե., 1967:
- ՄՄ — Մանուկ Մնացականյան, Նահանջ տարի, Ե., 1983, Ուր ևս գնում գինվոր (Սովետական գրականություն, 1984, № 6):
- Մ — Հակոբ Մեծուրի, Աթոսան, Ե., 1975:
- ՆԴ — Նար-Դոս, Երկերի ժողովածու, հ. 3, 4, Ե., 1968:
- ՍՇ — Ստեփան Շահապ, Երկեր, Ե., 1983:
- ԼԵ — Լեոն Շանթ, Երկեր, Ե., 1987:
- Շ — Ալեքսանդր Շիրազադյան, Երկերի ժողովածու, հ. 6, Ե., 1959:
- ՎՇ — Վաղինե Շուշանյան, Երկու գիտակ, Ե., 1983:
- ԱՊ — Արամշոտ Պապայան, Աշխարհն, այո, շուտ է եկել, Ե., 1972:
- Առ. Պ — Առաքել Պատրիկ, Կոմիտասյան դրամա, Ե., 1965:
- ԱՍ — Անահիտ Սահյան, Կարոտ, Ե., 1983:
- ՍՍ — Մկրտիչ Սաֆգան, Զինվորներ և սիրահարներ, Ե., 1969, Գարուն էր, ձյուն էր տրեղ, Ե., 1984:
- ՀՍ — Հմայակ Սիրաս, Արարատ, Ե., 1955:
- ԱՆ. Ս — Անժելա Ստեփանյան, Գունավոր քաղեր, Ե., 1967, Մորմոր, Ե., 1938:
- ԳՍ — Գարրիկ Սունդուկյան, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1951:
- ԲՎ — Բողան Վերդյան, Լեոնների որդին, Ե., 1962:
- ՎՏ — Վաղինե Տալյան, Շերամ, Ե., 1986:
- Բ — Բաֆիկ, Երկերի ժողովածու, հ. 3, Ե., 1955:
- ԱՔ — Արտաշես Քալանթարյան, Մովսէս ասկերը, Ե., 1988, Քննություն, Ե., 1989:

КИНЕМЫ ОБРАЩЕНИЯ В АРМЯНСКОМ ВЕРБАЛЬНОМ ЯЗЫКЕ

Է. Մ. ГЕВОРГЯН

Р е з ю м е

КИНЕМЫ ОБРАЩЕНИЯ целесообразно рассматривать с трех точек зрения, а именно: возможность непосредственного контакта коммуникантов, направленность кинем, степень подчеркнутости кинем. Анализ первой точки зрения показывает, что при коммуникации часть кинем выполняется на определенном расстоянии между коммуникантами.

Другая часть кинем выполняется путем непосредственного общения коммуникантов. Здесь основой является действие, к которому прибегает жестикулирующий при обращении.

Кинемы в большинстве случаев направлены вперед, в сторону, то есть к коммуниканту, находящемуся напротив, и только три кинемы направлены назад—коммуникант находится сзади говорящего («повернуть голову назад», «повернуться корпусом назад»). Кинема «толкнуть локтем» двоякого характера: можно толкнуть стоящего и сбоку, и сзади.

С точки зрения подчеркнутости кинемы обращения можно делить на следующие группы: кинемы без подчеркивания движения—слабые, едва воспринимаемые коммуникантом, подчеркнутые кинемы—движения сравнительно большого размаха, движения большого размаха.